4. Գնահատման մասին

(Հ.Հաջի-Հակոբյան)

Առաջին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Առաջարկված հայտի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցները	Չափաբաժինները
	առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝	
1.	«Թասկ» ՍՊԸ	1, 4
2.	Ա/Ձ Արման Ասմանգուլյան	3, 5
	երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչել՝	
1.	«Թասկ» ՍՊԸ	3, 5
2.	Ա/Ձ Արման Ասմանգուլյան	1,4,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5.Հարցում կատարելու մասին

(Հ.Հաջի-Հակոբյան)

ԿԵԱԿ-16/2-ՇՀԱՇՁԲ-15/3 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 7.5-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

6. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին

(Հ.Հաջի-Հակոբյան)

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

7.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Լ.Կոստանդյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ԿԵԱԿ-16/2-ՇՀԱՇՁԲ-15/3 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու գնահատման արդյունքների ամփոփման օրը <<Կամերային երաժշտության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ, ք. Երևան, Իսահակյան 1, 02 սենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

Հանձնաժողովի

Նախագահ Հ.Հաջի-Հակոբյան

անդամներ Լ.Կոստանդյան

Օ.Ղազարյան

Քարտուղար Է.Գրիգորյան